



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԱՊԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»



Handwritten signature

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«23» 01 2017 թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 04

Ձեռնարկողը՝

<<Ինջիներինգ էվրոս>> ՍՊԸ

Ք. Երևան, Վարդանանց փող. 28, բն 19

Գործունեությունը՝

**Նոր խարբերդի Մ. Ղազարյանի անվան թիվ 2
միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

<< Արարարի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 04

<23> 01 2017թ.

**<<Ինջիներինգ Էվրոս>> ՍՊԸ կողմից ներկայացված Նոր
Խարբերդի Մ. Ղազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

| | |
|-------------------|--|
| Ձեռնարկող՝ | <<Ինջիներինգ Էվրոս>> ՍՊԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/ |
| Տեղադրման վայրը՝ | «Արարատի մարզ, գյուղ Նոր Խարբերդ» |

Խարբերդ գյուղի Մ. Ղազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցումն իրականացվելու է «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում (ԴՍԱԲԾ)՝ Ասիական Ջարգացման Բանկի աջակցությամբ: Ծրագրի իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը /ՀՏԶՀ/: Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը:

Դպրոցի շինարարության համար նախատեսվող տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի կենտրոնական մասում, նախկինում գոյություն ունեցող թիվ 2 հիմնական դպրոցի տարածքում: Դպրոցի հողամասի մակերեսը կազմում է 9800 քմ, որից կառուցապատման ենթակա տարածքն ունի մոտ 3228.3 քմ մակերես: Դպրոցի քանդման աշխատանքներն իրականացվել են ՀՀ-ի կառավարության N 862-Ա (25 օգոստոս 2016 թ) որոշման համաձայն: Նախագծված դպրոցի կառուցման աշխատանքները կսկսվեն տեղամասից շինադրի դուրս բերումից հետո:

Դպրոցի տարածքը հիմնականում հարթ է, մակերեսի նիշերը տատանվում են 798.0-804.0 մետրի սահմաններում: Սեյսմիկ հետազոտությունների համաձայն՝ տարածքի համար սպասվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են 0.380g-0.400g տիրույթում և համապատասխանում են երկրերի սեյսմիկ կարգին: Գրունտային ջրերը գտնվում են մեծ խորությունների վրա, մինչև 10մ խորությամբ չի բացահայտվել:

Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի Մ. Ղազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի հիմնական հարցերի պատասխանատու
Գ. Գալստյան 30.01.17թ



Նոր Խարբերդի միջնակարգ դպրոցը նախատեսված է 600 աշակերտի համար, ներառելով 24 դասարան, յուրաքանչյուրը՝ 2 զուգահեռ դասարաններով: Դպրոցը բաղկացած է ֆունկցիոնալ 3 և կոնստրուկտիվ առումով 5 մասնաշենքերից, այդ թվում՝ ավագ և միջին դպրոցի մասնաշենք, տարրական դպրոցի մասնաշենք, սպորտի և հանդիսությունների մասնաշենք: Ավագ ու միջին դպրոցի մասնաշենքը նախագծվում է եռհարկանի, որտեղ նախատեսված են նաև ճաշարանային և բուժ. հատվածները: Բոլոր երեք մասնաշենքերի արտաքին պատերը և ծածկերը նախագծվում են մոնոլիտ/բետոնյա և կցերմամեկուսացվեն արտաքինից: Նախատեսված է դպրոցի 2 մուտք՝ գլխավոր և տնտեսական: Դպրոցին կից, հետնամասում նախտեսվում է 800 քմ մակերեսով ուսումնամարզական գոտի՝ վազքուղիով, տարրական դասարանների համար մարզահրապարակով և բասկետբոլի դաշտով, որի տարածքը ցանկապատվելու է "դրոբ ցանցից և մետաղական կարկասից հավաքված ցանկապատով: Տարածքում նախատեսված են նաև օժանդակ շինություններ՝ կաթսայատուն, պոմպակայան, 2 ջրամբար: Ուսումնական մասնաշենքերից յուրաքանչյուրում նախատեսված են վերելակներ, համապատասխանեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Դպրոցի բակում իրականացվելու է շուրջ 3000 քմ ասֆալտապատման աշխատանքներ: Տարածքի կանաչապատման մակերեսը ընդհանուր կազմում է 1700 քմ: Կանաչապատ գոտի է հանդիսանում առկա կանաչապատված տարածքը, միաժամանակ նախատեսվում է ծառերի տնկում և կանաչ գոտիների կազմակերպում՝ դպրոցի բակում և հարևան տնամերձ հատվածներին մոտ:

Տարածքի անձրևաջրերը հարթակներից և սավաճքից պողպատե կիսախողովակներով հեռացվելու են ռելիեֆի կազմակերպման շնորհիվ՝ ինքնահոսով դեպի գյուղի ճանապարհ, որտեղից մեծ թեքության հաշվին հեռացվելու են:

Պահանջվող էլեկտրաէներգիան կմատակարարվի տարածքին կից տրանսֆորմատորային ենթակայանից, գոյություն ունեցող 0.38կՎա մալուխային գծով՝ ընդհանուր 150 կՎտ հզորությամբ:

Դպրոցի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել նոր կառուցվող լոկալ կաթսայատան միջոցով: Գազամատակարարումն իրականացվում է դպրոցի մերձակայքով անցնող միջին ճնշման գազատարից: Բնական գազի առավելագույն ծախսը կկազմի 50 մ³/ժ: Կաթսայատունը շահագործվելու է 8000 կկալ/մ³ ջերմատվողականության երկու ջրային կաթսաների միջոցով: Կաթսայատան աշխատանքից առաջացած ծխագազերի հեռացումն իրականացվելու է d=300մմ տրամագծով և H=8.0 մ բարձրությամբ ծխնելույզի միջոցով:

Դպրոցի տաք ջրամատակարարումը նախատեսված է իրականացնել արևային պանելների միջոցով և էլեկտրականությամբ: Այդ նպատակի համար նախատեսվում է տեղադրել 6 հատ՝ յուրաքանչյուրը 2 քառ.մ մակերեսով արևային պանելային մարտկոցներ:

Նախնական գնահատման հայտում վերլուծվել է նախագծվող դպրոցի շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունները և մշակվել են բնապահպանական միջոցառումներ:

Շինհրապարակի կազմակերպումը, շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, ինչպես նաև շարժական տնակի տեղադրումը



կազմակերպվելու է բացառապես դպրոցի տարածքի ներսում, որը կառանձնացվի համապատասխան ցանկապատով: Շինարարական հրապարակի մակերեսներից ջրահեռացման համար նախատեսվել են լուծումներ, որոնց իրականացմամբ կբացառվեն դրանց արտահոսքը դպրոցի տարածքից դուրս, շրջակա տարածքներ:

Շինարարական աշխատանքներից առաջացած հողային զանգվածները ներկայացված են՝ ընդհանուր հանույթ՝ 8830.0 մ³ ետլիցք՝ 5912 մ³: Հողային աշխատանքներից ավելացված մնացորդային հողային զանգվածն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման աշխատանքներում, իսկ բուսահողը պահեստավորվելու է դպրոցի տարածքում՝ հետագայում կանաչապատման համար օգտագործելու նպատակով: Շինարարական աշխատանքներից առաջացած թափոններն ու շինադրը պարբերաբար տեղափոխվելու է Նոր Խարբերդ համայնքից 8 կմ հեռավորության վրա գտնվող Նուբարաշենի աղբավայր:

Շինարարության փուլում հաշվարկվել են հողային աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու արտանետումներ, համաձայն որոնց այդ քանակները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերի սահմաններում: Փոշեառաջացման կանխման նպատակով նախատեսվել է ջրցան: Շինաշխատանքների համար պահանջվող 1.1 լ/վրկ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքում գոյություն ունեցող 40 մմ տրամագծով ջրագծից:

Հայտում գնահատվել են նաև աղմուկի և թրթռումների, ջրային և հողային ռեսուրսների, բուսատեսակների վրա շինարարական աշխատանքների հնարավոր ազդեցությունները և վերջիններից խուսափելու նպատակով ԲԿՊ-ում նախատեսվել են բնապահանական միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առկա ծառատեսակները չեն հատվելու: Դպրոցի տարածքում առկա է շուրջ 760 քմ կանաչապատ տարածք՝ լայնատերևավոր ծառատեսակներով և սիզամարգով: Նախագծով նախատեսվում է կանաչապատ տարածքներն ավելացնել 940 քմ-ով, որտեղ կտնկվեն տվյալ պայմաններին համապատասխանող շուրջ 22 ծառ /որոնցից 5-ը եղևնի, 17-ը սոճի/ և կցանվի սիզամարգ: Մոտ 1700 ք.մ մակերեսով կանաչապատման համար նախատեսվում է Կոտայքի մարզից /Հրազդանի տարածաշրջան/ 200 խ.մ բնահողի ներկրում: Տեղամասում ոռոգման ջրատարի բացակայության պատճառով նախատեսված է ոռոգումը կազմակերպել բերովի ջրի միջոցով, որը կիրականացվի համայնքապետարանի օժանդակությամբ:

Շահագործման փուլում հնարավոր բնապահպանական ռիսկերը կարող են առաջանալ ջեռուցման շրջանում կաթսայատան շահագործումից, սակայն համաձայն կանխատեսումային հաշվարկների արտանետվող վտանգավոր նյութերի գետնամերձ քանակները գտնվում են բնակավայրի համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում:

Ծրագրի իրականացման երկու փուլերի ընթացքում (շինարարություն և գործարկում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները մշակվել են



ԲԿՊ-ում: ՀՏԶՀ-ի կողմից, ստուգաթեթիկին համաձայն, կանոնավոր մոնիտորինգի միջոցով ստուգվելու է միջոցառումների կատարման արդյունավետությունը:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում 11.01.2017թ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումների ժամանակ գործունեության իրականացումն արժանացավ հավանության: Հայտը ներկայացվել է ձեռնարկողին լրակազմման, հաշվի է առնվել նաև հանրային քննարկումների արդյունքում առաջ քաշված առաջարկությունները:

Ամփոփելով և վերլուծելով հայտում գնահատված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կարող են կրել ժամանակավոր բնույթ և ունենալ կարճատև ազդեցություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<հնչիներինգ Էվրոս>> ՍՊԸ կողմից ներկայացված Նոր Խարբերդի Մ. Ղազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



Հ. Մկրտչյան